ԱՐԱՐ

ՀԱՆԴԻՍ ՏԱՊԱՆՕՐԵԱՑ

Կը հրատարակվի ամեն ամսոյ 10ին, 20ին և վերջին։ Սորագրութիւնի պէտերն են՝ Կ=պոլիս։ Ընդհանրապէս Ընդհանրութիւն Ընդհանրապետ։ Մեծ նոր խանի վերի դռան թիւ 6։ Ջմիւռնիա։ Պ։ Գ։ Գ։ Պալիոպուրեանին հաճոյապահը։

Տարեկան գինն է 100 դրուշ։
Վեցամսեայ » 60 »
Մէկ թիւին » 4 »
Որ թիւին ուզվի իրնայ սորագրելիւ։
Դուրս երկաւթի ւրագրոյ ճամբու ծախը առնողին վրայ է։

Յանուցումն մէկ անգամ համար տողին 100 դր.
» երեք » 80 »
» երեք » 60 »
Մեծ։ պատկերազարդ և խոշոր գիրերով եղած յանուցումներու որիշ սակարկութիւն։

ՅՈՒՆՈՒԱՐ 20 Դ։ ՏԱՐԻ 1860 ԹԻՒ 86

ՏԻՐԻՆ ԱՂ, ՄՕՏԱՆ ԸՆՑԱՒ

Առ աղնիւ բարեկամ մեծարգոյ խմբագիր Արշալուսոյ Աբրահամեան։

Ընցած տարի Աղեղուն Տէր բառնին դէմ իր առաջին յօդուածը գրելէն ու գրիչը լեղուն տեղը դնելէն ետև, պատկեր քնացեր ու երազ մը տեսեր էր։

Այս երազին մէջ նամակ մը կը կարդայ, որ Ուռասատանէն Հանթարգելի մը ծայր հասեր էին. Խարիզէն ալ երկու հոգի ակնոցը քիթերնին՝ իրարու կռթընած աչքերնին անոր վրայ տնկեր էին. նամակին պարունակածն էր սա. "Տէրը պէրպէրներուն է. ամեհուն ալ տալով՝ պէրպէր ի'նեւելցընենք, պէրպէր կը նորոգենք. ամեն պէրպէրնուս վրայ մէկ պէր մը վատրկած էինք պարծենալու, ան ալ հասարակաց ընելով՝ մենք անպէր չը մնանք։ Տէրը ամենուն չէ, վասն զի երինասուր Տէրն է ամենուն տէրը։ Դուք կ'ուզէք որ ամենն ալ առ հասարակ պէր ըլլան. եսքը մեզի մի ծառայ ըլլայ, և մի մեզի պէր ձանչէ. վերուցէք սա պէրը, որ ծառայ չ'ունի. ընկեցէք սա պէրը, որ վարայ չ'ունի. խլեցէք, խղեցէք, կորզեցէք, կոտրեցէք, թաւիեցէք, ու տեղը նոր բառ մը թաւիեցէք. թաւիեցէք, ձուլեցէք, կազմեցէք, բաղադրեցէք, վերջապես ուրիշ բառ մը գործածեցէք, ու սա Աղեղուն բերանը գոցեցէք..."։

Իրար կռթընողները իրարու երես նայեցան ու ըսին։ "Իրաւ է. պէրը հանեցինք՝ պէրպէրը եւեղծուցինք. պէրը վերցընենք՝ պէրպէրը պակսեցընենք. — բայց հիմայ. — ո՛չ հիմայ. — ուստի վաղը դնենք ձաղը. — վախնամ Աղեղուն կ'ըլլանք խաղը. — այո՛. այո՛. աղէկ ըսիր. Թող հիմակուս հիմայ քիչ մը առեն ալ կենայ"։

Աղեղուն արձնցաւ ու ինքնիրեն ըսաւ. "քիչ մը առեն ալ կենայ... շատ աղէկ. մեր քովն ալ Թող պէրը մնայ, մինչև քիչ մը առենը լենայ"։ Ա՛ս լսելով երկրորդ յօդուածով մը ընդունեց պէր բառը միանգամայն անոր անեղուքիւնները ալ չ'ուզանալով։

Ատենը եկաւ լեցաւ. պէրին ալ մնաս անցաւ. հիմայ տէրերուն դէմ սասիկ հալածանք կայ. չ'էք հաւատար նէ՝ Ամերիկայի լսադիրները կարդացէք. չ'էք հաւատար նէ՝ Ավալեանց Դերապատիւ Գաբրիէլ Վարդապետին հրատարակած Օրիածան Հայապանծայը կարդացէք։ Տէրը մերժեր է, Պարծանը ընդուներ է։ Պարծանը Ուռասատանի բոլոր հայ լսադիրներուն ընդունած ու գործածած բառն է. Պարծանը Ուռբինեանց Թադաւորութեան առեն գործածված պատուանունն է. Պարծանը Հնդկաստանի հայոց առ հասարակ է. Պարծանը Տաճկաստանի հայոց կէսին գործածած բառն է. Պարծանը ոսկեմած հոգի Ազէ-Յոհաննէսին յաձախ գործածած մականունն է. վերջապես Պարծանը մեր դրացիին ոսկան է, և պարծանը՝ ամեն աղէկներուն ուզած բանն է։

Ուրեմն աղնիւ բարեկամ, եկէք մենք ալ աժեմին չ'աժեմին ձեռքէն ազատինք, պէրերը մէկդի նետենք, ու Պարծանը հրամցուենք. յայտնի է որ ալ ասկէ ետև աղան չ'ենք կրնար հրաւիրել. կանչենք նէ ալ չ'գայ. իս ինչը վնասեցինք կ'ըսէ. մենք ալ այսուհետև աղա

չենք ուզեր մեզի. միշտ կը բողոքենք աղային դէմ, ինչպէս մինչեւ հիմայ բողոքեցինք աղային ըրածին դէմ: Հանակերպութեան համար ընդունեցինք պէր բառը, աւելի մեծ համա կերպութեան մը համար ընդունենք Պարթեւ բառը, ու ամենեւին հոգ չընենք թէ մեկ քանի ալանեղու ծանր սլաք գայ Պարթեւը. մեր հիմկու ամիրաները աւելի իրենց գործ բովը փառաւորվելու են, քան թէ պատուա նուէններով: Այսօր ալ մեր Սիրանեղուն մէջ մեկ երկուքէ զատ ոչ ոք կը բնտռէ ասանկ բաները կամ սիրտին ցաւ կ'ընէ. աս ալ փոր ձով դիտենք: Ազգա-այը Հավարիս լրագիրն ու Արեւն ատենէ մ'ի վեր իրենց գօտինե ղուն վրայէն ամեն պատուոյ ածականները վեր ցուցած են, ու մարդ չը մերժեց զանոնք, և կրնանք ըսել որ մէջքերնին ածականներով լե ցուն լրագիրներէն սիրելի եղած են այսօր:

Ուստի մենք վայելուչն ու պատշաճը գոր ծածենք ան՝ այն մեկ քանի անձերն ալ, որ մինակ իրենց անունին պատուաւորվելուն համար լրագիր կ'առնեն, Թող չը կարգան մեր լրագիրները. ընկերութիւն մը ընելով լրա գիր մը Թող հանել տան մեկուն, ու անոր գօտիին վրայ իրենց անունին եռին առջեւ, վերի դին վարի դին, ածականներով լեցընել տան:

ԱԶԴԱՅԻՆ ՕՐԻՆԱԻՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Ա.

Անցեալ Թըւով՝ դրկնուս ծայրէն խոստ մունք մըն ենք վախտյեր. այն խոստման կա տարութիւնը կը խնդրեն մենէ, առանց ուշացը նելու:

Առաջուց պէտք է ըսենք, հնձուարի ու վրը շտ խնդիր մըն է այն խնդիրը, որ մեր առջեւ և Ազգին առջեւ կը տնկըվի այսօր նորէն՝ ա հեղադէմ ու ապառնալից . . . :

Ըս սակայն՝ այս խնդիրը հակառ խնդիր մըն է և մեկ քանի տարիներէ ի վեր մեր հասարակութեան խոհուն մասը կ'զբաղեցնէ:

Տեսնենք սրն է:

Կառավարութիւնները ընդհանրապէս երբ կու մեծ ձիւղերու կը բաժնըվին:

Առաջին կերպը կառավարութեան՝ ան է, որուն մէջ կառավարող իշխանութիւնը կա ռավարեալներուն վրայ իբրև տէր կ'իշխէ. հոն Ազգին անդամները հպատակ կ'ըսվին:

Երկրորդ կերպն ան է, որուն մէջ կառա վարող իշխանութիւնը կառավարեալներուն կողմէն իբրև ներկայացուցիչ կ'ընտրվի. հոն Ազգին անդամները քաղաքացի կ'ըսվին:

Միեւն ժամանակ, ամեն տեղ, ամեն ազգի մէջ, ազգն անկախ ըլլայ թէ ոչ, մինչեւ ան գամ մանուածոր քաղաքներու և Թաղերու մէջ, երբ կառավարութիւն կայ՝ այս երկու տեսակներէն մեկին է, որմէ զանազան բա ժանմունքներ կը պարունակուի իրենց մէջ իւ րաքանչիւրը կը պարունակէ իրենց մէջ իւ րաքանչիւր քիչ տարբերութեամբ ու ըստ այնմ կառավարութիւն լսված իրն ալ զանա զան անուններ կ'առնէ. միապետութիւն, արձակապետութիւն, սակաւապետութիւն, ազ նուապետութիւն, աստուածապետական կա ռավարութիւն, ահմանադրական կառավա րութիւն, հանրապետութիւն, ռամկապե տութիւն:

Այս անուններուն մեկին ալ մեղմ պէտք չէ, և մեր Ազգին չը պատկանիր: Միեղմ պէտք եղածը սա է:

Մեկ դեռ տասներկու տարի առաջ, Հա յոց ազգին կառավարութիւնը՝ վերը յիշված կառավարութեան տեսակներուն առջեւին տեսակն էր. Ս. Պատրիարքը, իբրև միահե ծան տէր, կը կառավարէր Ազգը: Սիրանե րը կ'ընտրեին Պատրիարքը, Խարձրագոյն դու ռը կը հաստատէր, Ազգն ալ անխոտոր կ'ըն դունէր զանի, ինչպէս ոչխարն հօտ մը իր հո վիւը. միայն թէ այս հավիւը ոչ թէ չուտով, այլ դառապանաւ երկաթեաւ կ'առաջնորդէր հօտին: Այն տեղն տասնակ կը պահանջէին գուչէ դարը, բարքերը, ժողովուրդին կրթութիւնը, ժամանակին սկզբունքները, ու նախութիւնները և ընդհանուր տալորնութիւնը Թուրքաստանի մէջ:

Ժամանակ անցնելով քանի որ լոյս ու կրթութիւն չատացան Ազգին մէջ, այն հին դրութիւնն ալ կառավարութեան՝ աչքէ ընկաւ, անպիտանացաւ ու քանի քանի անգամ ալմկալից խռովութիւններով ու ազգովին չարձակմունքներով խոյտառակեցաւ . . . :

Ազգին բերմունքը տեսնելով՝ մտայի ու կենցաղագէտ ոմանք աղէկ հասկըցան, որ ալ այն ձամբով ընթանալ անկարելի պիտի ըլլար. այս անձանց պարագլուխ եղաւ մեծատաւխ Յակոբ Արփիարեան Կաճիկեան, զոր մտնա ւոր կերպով յիշելով հոս՝ Ազգին կոչմեն և բախտաւորութեան հարկ մըն է որ կը հա տուցանենք իր անունը:

Այն միջոցին էր, որ Խարձրագոյն դուռը հրովարտակ մը շնորհեց, որով Ազգային կա ռավարութիւնը Ազգային ժողովի մը կը յանձ-

նէր՝ Ս. Պատրիարքի նախագահութեան ներքեւ, կրօնական խնդրոց համար Հոգեւոր ըսված Ժողովը և քաղաքական խնդրոց համար Դերագոյն ըսված Ժողովը սահմանելով։ Արմ Ազգային կառավարութիւնը հին դրութենէն եկաւ, նոր դրութեան մը մէջ մնաւ։

Ժողովով կառավարութիւնը ազգով կառավարութիւն կ՚ըսէ. այն տեսակ կառավարութիւն է այս, որուն մէջ կառավարող իշխանութիւնը՝ կառավարեալներուն կամքէն երբ երեսփոխան կը կառավարէ. աւելի քայ կ՚ըսենք, Ազգը կ՚ընտրէ այս կառավարութեան անդամները։

Այն խոհական անձինքն որ պատճառ եղան այն ժամանակ Ազգին կառավարութեան ձեւին փոխուիլուն, իրենց խոհեմութիւնը մէջ պակասութիւն մը ըրին։

Կարծեցին թէ հերիք էր անունը փոխելը, անուններ դնելը. և չը մտածեցին որ Ազգը տակաւին անվարժ և անպիտակ էր այս եղանակ կառավարութեան, և թէ առջի օրէն այն կառավարութեան տարերքը, պայմաններն ու կանոնները ճշդիւ որոշելու ու լաւ մը բացատրելու էր, որպէս զի Ազգն ալ որ նոր ճամբու մը մէջ կը մտնէր, ալէկոծ մը ճանչէր իր պարտքն ու իրաւունքները։

Այս եական կողմը բարձ՚ի Թողլ ըրած բլլալնուն համար է, այս զանցառութեան եբեսէն է, որ իրենց ըրած օգուտն ալ չը կրնցաւ ազգը. այս զանցառութեան երեսէն է այն ամէն չարիք Ազգին մէջ, որոնց վրայ մերթ լացինք, մերթ խնդացինք. այս զանցառութեան երեսէն է, որ Ազգային ժողովը տասներկու տարիէ՚ի վեր դեռ չը կրնցաւ վճռագոհ ընել։

Պատրիարքներ փոխուեցան, Օծեալներ իրարու յաջորդեցին, Ժողովականներ փոխուեցան, վեց շրջան ըրաւ Ժողովը և տակաւին օրինաւոր կառավարութիւն մը չ՚ունինք, և դեռ երկու տասը ազգային ժողովականք հրաւիրեցին Ազգին, թէ ազգային ժողով չ՚ունինք։։։ Ու տակայն տասն անգամ տասին ու վայ եղաւ Ազգը այս բանիս համար. քանի՛ քանի անգամ խուժանն ազատակով՚ի Պատրիարքարան թափեցաւ. քանի՛ քանի անգամ Այր-Եկեղեցւոյ գաւիթներն ու ներքնապատիները, տաճառածային օրհնութեանց ու ազօթից ջերմեռանդ ձայներուն փոխանակ՝ քինու, նախանձու, հակառակութեան կատաղի աւազներովը թնդացին։։։։ Այն հատուածութեան տաճարին սրբազան սիւները, որոնց պատկառելի շարքը Սրբութիւն-Սրբոցին խորանին առջև, երկնային կամարներուն հպակատ ու անճառելի շարքը կը նմանցնէ երբ օթոց ձգված Ամենակալին աթոռին առջև, այն սիւները որ խնկելվնասու մեղսամոներուն ծուխովը նահատցած՝ էն ցուրտ սիրտերուն ջերմեռանդութիւնը կը շարժեն և խորին, ահարկու, երկիւղած լռութիւն մը կ՚ազդեն, իրենց սրբութիւնը մերկացան՝ խուժանին լրբենի պօռչտուքներուն ու խառնիճաղանճ աղաղակներուն ձայնէն, և ո՛ ամօթիցս, վկայ եղան անմարելի ատելութեան և անողքելի սիրտե՚ի սիրտ։

. . . . . .

. . . . . .

Ա՛հ, այսքան կռիւ, ատելութիւն, սէր, նախանձ, ներսղամոութիւն, երկպառակութիւն, հերձուած, տաղանդ անխտրութիւնակ, անապարձ շաղակրատութիւն, ինքնահաւանութիւն, անձնուէր առաքինութիւն, անձնուրաց ազգասիրութիւն, ինքնամոլ ազգասիրութիւն, շահասէր ու շողոմ Ջանադրութիւնք, շռայլոտ բանասիրութիւնք, կատոնեան հաստատամոութիւն, Ընիկդիսեան արդարութիւն, Աերուժանի մատնութիւնք, Ռօսէնի օձութիւնք իրարու հանդիպեցան, իրար մղեցին և այն մեծ խնդրոյն բոլորտիքը սուլեցին, շչեցին, շառաչեցին։։։ ու դեռ խնդիրը չը լուծվեցաւ։։։։

ԴՊՐՈՑԻ ՄԸ ԱՇԿԵՐՏՆԵՐՈՒ ՓՆՈՒԹԻՒՆԸ ՈՒՍՄԱՆՑ ՄԷՋ

Ամէնէ մը՛ի վեր ազգային դպրոցներու աշկերտներու քննութեան մը նկատողութիւնը ընել կ՛ուզէր Աղաւնի. բայց կը մը տածէր, որ իր այս նկատողութիւնը ըրած առենը դպրոցի մը մէջ ալ քննութիւն մ՛ըլլալը վրայ գար նէ՝ այն դպրոցին հոգաբարձուները, վարժապետները, անուանները «Ա՛յ, ասիկայ մեր պատ(ւ)ին կը դպչի ու կը կործանէ. վայ, ասի մեր քիթին կը դպչի՛ մեղ հարցուխ (նեվաղիլ) կ՛ընէ ու քիթերնիս կը վաղ ցընէ» ըսելով խեղճ Աղաւնի՛ն Գատրիարքարան պիտի վազցընեն, ու պարապ տեղը պիտի հոգնեցնեն: Ասոր համար կ՛ապասէր: Ինչպէս տարի ալ դժբաղդաբար քննութիւն մը կար. կարծեմ՝ քանի մը շրջաններին նեղանար՝ քննութիւն կուտային, անանկ որ՝ Պատիւն մէջ տեղ չըմնալով՝ շատերն ալ եղան Աղաւնի՛ն վրայ վազեցին: Պատահած տուաւ որ Աղաւնի՛ն ան առենն ալ խոհեմութիւն ըրաւ ու բան մը չըգրեց. չէ նէ՝ հոգաբարձու վարժապետ եայն օր մը ամէնը մէկէն դըպրատուններէն կը գոչէին ու Աղաւնին վրայ վազելով, Պատահած հեռու ընէ, կը խզդեին: — Թող չը վախնար, կ՛ըսէ մէկը քովէս, դըպրատուններէն գոչ եղած օրը սա մարդիկը Աղաւնի՛ն խզդելու գային նէ՝ աշկերտներն ալ, քանի մը հազարը մէկէն, անհամեմատելի բառերով ու պըտըղմածքով ու ուսումնքներով գլուխին ուռեցնող, ու ժամանակնին գող գող սա մարդոց դէմ Աղաւնի՛ պաշտպանելու կը վազէին, ու անոր տեղը զանոնք կը խզդեին. — խելքիդ պատուկը սիրեմ. ան ալ առեն ալ «Աղաւնի՛ դըգռիչ է» ըսելով դա տապազանել տալու ու «Ի՛նչ հան պըտա» պօռալու կ՛ելնէին: Աղաւնի՛ ուրիշին խելք քովը չը կառավարվիր, ուրիշին բերնովը հոգ չ՛ուտէ: Աղաւնի՛ համբերող է, խաղաղութեանց պատճառ չ՛ըլլար ամենևին: Կը համբերէ, ու հիմայ որ քննութիւններուն տուի (*ըլլալ*) կոչ՝ հիմայ կ՛ելնէ դպրոցի մը քննութեան նկատ բացատրութիւնը ընելու:

Երկու ամիսէն՛ի վեր դպրոցին մէջ մեծ շարժուձիմ կայ. «Սա կողը գնէն գոչ ըսէ, կ՛ըսէ վարժապետը աշկերտի մը. սա կտրէն ալ գնէն բերնուց ասրմէ, կ՛ըսէ մէկ ուրիշին. ասկէ միւսէն հոս աղէկ սերտէ կ՛ըսէ միւսին. ջան հոս տեղ մանկ չընէ, կ՛ըսէ մէկին ալ. օ՜փէլանէրով կասէ, ու ամէն մէկուն մէջ մէկ մէկ տեսակ մեքանեթով գրէ, քիչ մը նօտ գիր, քիչ մը շղագիր, քննութեան օրը նոր լաթերդ հագիր. քիչ մը բարակ գիր, քիչ մը օրնա գիր, քննութեան օրը խուցին մէջ թա գիր. տեղապահներուն տակը աշակերտաց ա մեն մէկին անուանդ գիր: Ուրն ալ սա ձառը սա գոչ ըսէ, հարցընողին՝ ես չընեցի ըսէ»: — Տեսածդ պես կը պատմէ Աղաւնի՛ պիտի ըսեն հիմայ: — Ին ալ տանկ քննութիւններ անցուցած է ազգս ալ:

Քննութեան քանի մը օր մնաց, հրաւէրը նոր կը ցըրվին ամեն տեղ, որուն օրինակն է գրեթէ սա.

«Ազաջկայ կիրակին, սուտ Խիկարեան դպրոցին առնից և Ինձիրէյ գաղղիաբանութեան, տաճկաբանութեան, հայերէնաբանութեան, պարսկաբանութեան, մինակաբանութեան եայլն եայլն, գեղեցկագրութեան, աշխարհագրութեան, նիւթ հետաքրքրութեան, պատճառ գրգռութեան, բեռնաց կրութեան եայլն. դիւագիտութեան, սա տեղագիտութեան, անտեղի գիտութեան, մեծ մեծ քիթութեան, եայլն. բնաբանութեան, փորձաճութեան և անդամալուծութեան քննութիւնը կայ (ըսել է որ այս գիտութիւններն են քննելիքները) ուստի կը խնդրենք, որ դուք ալ հրամիքը, ու այս գլուխ ուռեցնող, ականջ ակտրացնող աչք խուսափցընող հանդէսը վառաւորելով երթաք երկու շաբաթ հիւանդ պառկիք»:

Աղնամք ձեր աղնութեան
խոնարհ հոգեբարձուք:

Այս հրաւէրի տամամներէն օտարազգի՛ներուն ալ կ՛երթայ: Թղթատաճառ Ա՛ենաքնեմին՝ իր տուած թուղթերը ծէ գողցված ալ գործածված ըլլալը ցուցընելու համար. Ֆոթէր Նօրիկին՝ իր ծախած գրիչներուն աղէկ կտրված ըլլալը տեսընելու համար, եայլն եայլն:

Քննութեան օրը եկաւ հատաւ. դպրոցին սրահին պատերը ծածկվված են թուղթերով, ինչպէս տախտակներուն դրացի տուներէն եկած աթոռներով. թուղթերուն մէջ աշխարհացոյց տախտակներ. ատլաքն են չիներ, աշխարհիս ձևն են փոխեր. մէջ գծագրութիւններ. բան չ՛ունիս նէ նայէ. տանձի ծառին վրայ խնձոր բուսած մի կ՛ուզես, աբմուխի տերևներուն մէջէն բօրթուկալ կախված մի կ՛ուզես, երկու սրտով կապիկ, ջուր տաքով ճանճ, կռնակին ջուր եղջիւրով կով,

իրարու փակած երկու շրթն ալ կ'ուզես (մէկը շուքն է եղեր)։ առ կենդանիները լսափնին մէջ տեսեր են։ Արահին մէջ տեղը մեծ սեղան մը. — առաջին անգամ քննութեան եկողը կը կարծէ թէ կերակուր պիտի հանեն՝ "ու հահ, առ ալէկ եկաւ կ'ըսէ. առաուն կանուխ քան չը կերած ճամբայ ելայ՝ անօթութենէս ձեռքիս երեսը կը կրծեի, ֆէսիս չէնարը կը ծրծեի կոր"։

Հանդիսականք կուգան կը լեցնեն սրահը աթոռներու վրայ. ժողովուրդն ալ իրարու վրայ։ Վարժապետը կը վազէ, "ծո տղայք, պատրաստ էք. — այո վրժպետ. — էյ ին դասը ալէկ գիտէք. — աշխարհագրութեան դասը շատ ալէկ գիտենք. — էհ անանկ է նէ՝ էն առաջ աշխարհագրութիւնը թող քննվին (նայինք համարը դիտէ՞)։ քննութեան սկիզբը երկան բարակ կ'ըլլայ. էյ իշտէ պատրաստվեցէք։ Յակոբ, չ'ըլլայ որ վախնալով պատասխան ատա. դուն ամէնէն յառաջադէմն ես. — այո վրժպետ, ոչ վրժպետ. ես իմ դասերս ճուպճուր գիտեմ վրժպետ. բայց վրժպետ, խաղաղական Ովհաննոսը Ախալի մէջն է, չէ նէ Ներսոպալ. — չէ ծո, հոն ինչ բան ունի... կայնէ նայիմ ուր կ'ինայ... ին խաֆա կ'ինայ... — վարժապետ, խանդն չօշ կիյնէ չ'ելլուար ածած. — չէ ծո, էյ հիմայ ատենը չէ. պէչէ ան կոտրը քեզի չ'են հարցներ։

Վարժապետը սրահը կուգայ, անկէ դանգակ մը կը զարնէ՝ ըստուգիւն, զանգակ մ'ալ՝ քննութիւնը սկսած ատեն. զանգակ մ'ալ՝ որ ղաքն ոսք առնեն ատեն։ Այս երրորդ զանգակին վրայ՝ երաշտութիւն (երաժշտութիւն) մըն է կ'սկսի. — աղօթք ընող ընողն որ վերջը գայ դպրի —։ Վարժապետին այս հանդիսին համար վնասած երգն է։ Տղայքը հետեւեալը երգելով կուգան։

Իրախուսեցէք, ծնունդք Հայոց
— Ականջ նայէ ծո, առջիդ քար կայ. —
Օ՛ն անմահ փառք ձեր Հայրենեաց
Ի սոյն հանդէս նաեմանան։ . . .
. . . . . .

Տղայքը երգելով եկան երթնոց համար կէս շրջանակի վրայ շարված աթոռներուն վրայ նստան՝ զանգակին ձայնին հնազանդելով։

Առաջին ձառը գոց ընող տղան պատրաստվեցաւ. "բարձր տեղ մը ելլուլս է, ըստս վարժապետը, բարձր տեղ մը. — աթոռ մը դնենք. — աւելի բարձր..."։

Սառանան ալ այն վարկենին բերաւ պիտի ճի մը անցուց փողոցին. բանիբուն տնտեսը վար վաղեց, ու անոր սրբած առաւ հինգ վայրկեանի համար քանի մը փարայ տալով, թէպէտ եաքը հինգ վայրկեանէն եւեր քշելուն համար մեծ վէճ ալ եղաւ։ Սրբած բերին դրին, վրան ալ տախտակ մը, տղան ալ դրկեցին վրան դրին. տախտակին ալ երկու քովէն մէյմէկ հոդի բռնեցին։

Տղան խնալու վախէն դողալով, աչքերը ջրոս կողմը պտըտցուց, ու սկսաւ կարդալ իր ճառը, որ սա էր։

Մեծարու Տեառք։

Խիկար իմաստունին քաղնիքէն մօրէ մերկ փախած օրը այս դպրոցին դռները բաց գըտնըվելով կուգայ այս սրահին ձեղունին (թաւան) մէջ կը մտնայ ու անոր օրհնութեամբն այսօր Թլփնը (եօնուզ պալըղը) լեզու առած ահա ձեր առջեւ, այս շքեղաքանդակ հանդիսին մէջ իր ուսանող նախածայրիկները կը մատուցանէ խրթին հանելուկաց և սրատաչափ կարիանդակ։ Այո այո, մեր Ազգն ալ ունեցած է Մեսրովպներ, Սահակներ, Հանդիսասկաններ, Ներսէսներ, Մաշտոցներ, Վռամ շապուհներ, քերդողներ, ճանկռտողներ, Կորիւնները և ասոնցմէ մեծ՝ առիւծներ։ Այո այո. մենք ալ ունեցած ենք ոսկի, արծաթ, պղինձ, անագ դարեր. բայց աւաղ, տգիտութեան խաւարը խելայ խարուկին խորագոյն խառոյը խաւարելով խիտունկներու խորին խարհուրդներով ծայրագոյն ծուլութեամբ ծակէ ծակ ծածկըվելով ծուխ ծուխ ծաւալեցաւ (ծանր ծախահարութիւն)...։

Բայց ձեր են հիմայ, ձեր են սիրելի ընթերցողք, չէ իրաւ ունկնդիրք.... ձեր են այն թաւերը, ուր մեր հաւերը (տեսէք) պարծենալով կը բարձրանային ու կը խոռոչայնային. ձեր են, ձեր են. ձեր են այն դաշտերը, ուր մեր զաւկներն ու թոռները ասպռաներու մէջ փաստըված, անտառներու մէջ առիւծներու հետ կ'ըմբշամարտեին, դաշտերուն մէջ կը լողային, տաշտերուն մէջ երկիր կը բանէին, հիւսիսային բևեռին քով ձերմակ արջերու հետ կը կռվէին, Մանասկասարի մէջ Թագուհին աթոռէն վար կ'առնէին, Բարեյուսոյ Պլուխը սանտրելով Հուսա-Թուխման (օձանկ — ուխման) կոպրինեերու ժողովուրդը կ'արածէին. ու իրիկուններըը պզը ձախ և վեհմ և վատվատուն առարներով պզը պերճխմաստ պատերով տուն կը վազէին, ու կու դային ձեռքերնիս կը պագնէին։ Ամէն

մենք ալ մահու անկողնին մէջ յարութեան յուսով, սրտաբեկ կանգեղներու լուսով, ինքնաբուխ բառով ու երկու ուսով.... աւաղ դիտութեանց ձնձռոտիք, հիւնուածին օդիք, ձեղի պէս անօթիք, ցնորիք ցնդիք.... աւաղ այսօր, ամոր անոր դեռ նորանոր լոյս կու տանք կոր.... աւաղ, ահ, եղբայր, ափ ափս, վայ ցաւոցս.....:

Բայց մի ուրախանաք. այս ածականները ցաւ չեն յայտներ ամենևին. ինչո՞ւ կու լաք հայեր, սիրտ առէք. նաւապետակի պէս աներկիւղ եղէք, խլուրտի պէս սրատես, աղաւնիի պէս խորամանկ, թուխթակի պէս ճարտար, կապիկի պէս լեզուանի եղէք. ու ան աստեն մենք ալ ամեն մէկերնիս մէկ մէկ ախորժահամ վար—թան կ'ըլլանք. մեր Ազգին թշնամւոյց նեռերուն դէմ ծակ ծակ եղած թուղթէ վահան կ'ըլլանք. խրախոյս առէք որ ակար թշնամիին առջևէն խոյս տալու կարօղ ըլլաք. մի վախնաք, պատերազմեցէք կռուեցէք միշտ ձեր եռանդն վազող շունչին հետ. Հայաստանի դիւցազունք տակաւին կ'ապրին — պատմութեանց մէջ. մի վախնաք, ձեր կռնակը հաստ է, ձեր պաշտպանը աստ է՝ ձեր զօրութիւնը նուաստ է, այս հանդէսը հայոց հին փառաց փաստ է (փաս է) մեր առաջնորդը գրաստ է, վարժապետնիս անխմոստ է:

Մի տրամիք կ'ըսեմ ձեղի, երբ այսչափ կառաւարելութիւն, այսչափ պարգև ու շնորհք կու գան մեր ազգին գլխուն վրայ՝ հասը 100 տիրէմնոց կարկուտներու պէս..... Այս առնամանեայ առատիկ տարտուս սրբոսած սրահին սիրով սրճած սաներուն պաքներէն, տարտախ, տոկատմ ան ան տուգերն առանելով վերջապէս օր մը պիտի հալածեն հայոց տահմանները անոնց անունը (հայոյ):

Բայց.... բայց.... բայց.... ինչ ահագին ան ու տխուր տխմարութիւն մը պատեց միտքս ու ուղեղս մէջտեղի մաշկին երակներուն մէջ. աչքս՝ գինովլ լցուն գաւաթներ կ'երևան ամեն մէկ հանգիստականներուն գլխուն վրայ.... ինչ կը տեսնեմ. ահ վերթեցաւ չրթունքներս, առատիկ տոթոլիկի աստեն պատռած ալիքներու ձեղքվածքին պէս. ահ խառաբեցաւ աչքերս, չորս գործողութիւն ունենալու համար, տարիներով ան տախտակներու վրայ նայելէն նայելէն, ինչպէս որ հաւը ջուր կը խմէ ու երկինք կը նայի: Ահ. կը գոչան ծունկերս, քանի որ կը մոռնամ թէ ինչի վրայ եմ կայներ. ահ. քիթս կը մռմռայ, ականջս կը խռկայ, բերանս կ'արտասուէ, աչքս կը թրթռայ, շապկիս կը կեռայ, գօտիս կը ցաւի, սիրտս կը պաղատի, լեզուս կը թո, թո, թո, թոթովէ ու ան չեմ կրնար խօսիլ.....

Այս միջոցին զանգակ մը զարնվեցաւ. աշկերտները նստած տեղերնուն տոքլի վրայ ելան ու խմբատ սրտաշարժ երգ մը երգել սկան, որով բոլոր հանդիսականները լացուցին. այս երգին մէկ երկու տունը հոս դնելը անպատշաճ չենք դատեր:

Լացէք ողբացէք, ծերը սրտաբաք համայն
Դատցէք պօռացէք փողոցին օրհան
Ահա Յանկլտին կ'երթայ 'ի դամբան
Զգեցավ եռին եչխէր ալմաճան:

Մեր երիտասարդք հայոց յուսատու
Կը խաշան խավը—, պիչաս— աս առւտու
Յիշոց, հայհոյանք, խօսք կծու, թունաւու
Դպրոցն է անոնց միշտ համարատու:

Որ են ճնացեր այն աշխոյժ հոգիք
Սատանայի պէս շատ մը սև ոգիք
Որ կը խայտային շիւմայ բոլորտիք
Մեղ կը վարէին միշտ տոտիկ տոտիկ..
. . . . . .

Երգը լմնցաւ զանգակին ձայնով, ան աւտեն նոր զանգակ մ'ալ զարնվեցաւ, ու քննութիւնը սկսաւ ըսին:

Ձանդիսականները ամենը մէկէն ոտք ելան ու "ալ աստենը ուշ է երթանք, ճառն ու երգերը երկան քշեցին՝ իրիկուն եղաւ" ըսին. ուստի՝

Վենոմիխը ամառ գլխուն ճաշ:

ԿՈՄՍ ԵՄՄԱՆՈՒԷԼԻ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԵՆ

. . . . . .

Յիշատակարանիս աչքերը բաց են և ականջները սուր... Բաւական է իւր անձը մաքրել, քան թէ բարկանալ այն մարդուս վերայ, որ տեսանելով ապականութիւնը, ատելի չյայտնի թէ ապականած է:

Տարակոյս չկայ, մեր ազգի հիւանդութիւնը դարաւոր է. այն ապականութիւնքը, որով նա պղծել է իւր հայութեան անունը, մեծ հնարներէն են կարծեմ, որ ուրկէ՞ն, բայց մեր մեր կարողութեան չափ պատրաստել ենք ոտտատուրեզ այս սուրբ պաշտօնին: Մեր համար ազգութիւնը և ամբողջ ազգի կառավարութեան գաղափարը այնքան ծանր կշռի ունի, որ գործն պահպանելու և օգնելու մտքով պատրաստ ենք ամեն նայն զոհաբերութեան, ինչ որ միայն կարող էր մի մտաւոր գիր մտիք: Այս բաներէն մէկ պչինչ են մեր աչքում մի քանի կռապաշտ Հայերի պատուասիրութիւնը և անձնասիրութիւնը, ուստի մաքուր խղճմտանքով և ձեռքերս սրտերիս վրայ դրած, ոչ միայն զոհուելնք նորանց, այլ որպես քաղդեական սերմից յառաջացած ծնունդներ՝ քարին ենք զարկում:

Շատ լաւ գիտենք, որ մեք այս ձանձրալարհով ատելի ենք

կացանում մեր անձը, և այս է պատճառը, որ Հիւսիսափայլը փուշ է շատերի աչքին, բայց միշտ մտածումներ, թէ պատասխանատու ենք Աստուծոյ առաջև, պատասխանատու խղճմտանքի և ազգի գոյատևութեան առաջև։

Եթէ մեր խորհուրդը լինէր գնալ օդի և ջահատացութեան քամիին, եթէ մեր ցանկութիւնը լինէր սուրբ համբերել ամէնայն հնար, որ ձեռնտու էր մեզ սիրելի կացութեան պահին և թէ Հիւսիսափայլի ձանձրալարը հարթելու, այն ժամանակ, ի հարկէ մեք ևս կը ղեկեինք ազգի օգտաբեր ճամբով, մեք ևս կեղծաւորութիւնը կը ընդունինք մի յաղթական գոյութիւն։ Բայց երբ մեզ հետ մեր ազգային հնարքը, նպատակ ունինք օգտակարանալ և ճիրվիներին, որոնց հետ չունինք ոեւէ գործ։ Եւ ոչ միայն այսչափ, այլև չենք ցանկանում, որ այդ գիւտարտադրի մարդիկը գովեն մեզ, մեր գործը, մեր ուղղութիւնը, լսատ սրտի մեք ինքներին պիտի կատարելի երևեինք մեր աչքին։

Ազգի անդաստանի մէջ հինգ ցորենաբոյս չկայ, բայց փուշ և որմ բնաբուծ, ազատուինք ամենակալ Տէրը որատիւ գործատուներ ուղարկէ, որ լինամոլ խլեին այդ փուշերը, որպէս զի ամենիս բոյսերը հնար առնային ածելու և զօրանալու։ Ժամանակ է որ Հայերը գոնա գոնէ երեխայութենից և մի փոքր այլութիւն առանան, սովրին դատել և ճանաչել աւելը և սպիտակը. մինչև այժմ նոքա դատել են միայն գիտուն և պանրի արժանաւորութիւնը։ Ժամանակ է որ մի փոքր մտածել ուսանին, որովհետև մինչև այժմ դատնկել են նոյն գրութեան մէջ, ինչ վիճակում էր Նաբատգործարը երբոյց յետոյ. "Եւ բանն վերացաւ չինէն" առումը նա մարգարէին։

Ամաչումենք, մի օտար մարդու առաջև, երբ պատմելով մեզ մեր ազգի անցրաւութիւնը, նիւթականութիւնը և երեխայական գաղտղութիւնքը, խնդրումեն պատասխանել, թէ ինչ աղբիւրից յառաջանում են դոքա և թէ կարելի է արգելօք մինչև այդ ատելին անպարգել իւր անձը։ Մեզ շատ անգամ բանագատումն կարելի և ամաչել, բայց մեր հոգով չափ սիրելի Հայերը չիմին, որ եղբայրաբար խօսելով նոցա հետ, խնդրենինք վերացնել այն տգեղութիւնքը, որոնց համար ամենապատուաւոր մեզ օտարների առաջև։

Մեր ազգի խոչերը և ցաւերը քաջ յայտնի են մեզ, բայց ինքը ազգը չիմի խոստովանել իւր հիւանդութիւնը, նա փախչում է բժշկից, նա կարծում է, թէ թագուցանելով փտած և տգեղ վէրքերը ընկերի աչքից, կարող եր պարտիկել իւր պարտքը. այդ վէրքերը ճարակում են նոքա հոգին, և այս պատճառով ևս Հայը մարմնով միայն ապրում է։

Մի քանի թևթևամիտ օրագրերի և լրագրերի խելացնոր կարծիքներ և գաղափարք հասանում են մեր ականջին, բայց դոքա կտրած պանդակի ճայնից աւելի չունին ուրիշ արժանաւորութիւն։ Մենք ձիծաղում ենք գոյա վերայ, բայց այդ ծիծաղը արտասուքից դառն է մեր համար, քան սրտմ այդ բաները գործվում են մեր ազգին մէջ։

Այդ երեխայամիտ օրագիրքը և լրագիրքը մինչև այժմ ալաո են դրել՝ բամբասել մեզ և մեր սուրի հակառակը պնդել, մինչև այն աստիճան մոլորութեան հասանելով, որ եթէ Հիւսիսափայլի մէջ գրվի, թէ Աստուած կայ, նոքա պատրաստ են և այդ ուրանալ։ Մի քանի հոգևորների կողմից նըզովքի շանթեր ևս տեսանում ենք դէպ ի մեզ արձակված, բայց այդպիսի շանթերը փուճով շինծոյք են և վաղուց արդէն կորսուել են մոլորեալներն աշխարհում իւրեանց գաղտնածածուկ խորհուրդը։

Մեր սիրտը լցուած է սրբենալ. մենք այս տեղ չենք ծառայում մեր սիրելին, ինչպես մի քանի գիշերադեմ մարդիկ հայհոյեցին մեզ, այլ սպասաւորումենք ազգի օգտին. գուցե մեզաւոր ենք նոքանով, որ մեր աչքին առաջև են Հայոց ազգի համար, սրանից հարիւր տարի յետոյ գալոց օրերը։

. . . . . .

Հիւսիսափայլ։

ՕՖԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընթերցասիրաց Թանգարանի Ընկերութիւնը, որ անցածներս իր Թանգարանը հասարակաց բրած էր Քուէքերաց՝ տեսնելով որ մեծ դժուարութիւն կ'ըլլայ ընթերցողաց հոն երթալ ու լրագիր կամ գիրք կարդալը, ընդհանուր խորհրդով որոշեց, որ ընթերցողաց աւելի դիւրութիւն ըլլալու համար աւելի յարմար տեղ մը վախտագրէ հասարակաց ընթերցարանը։ Ուստի Մեծ նոր հանի վերի դասի մէջ թիւ 6 տեսակը ընտրեց ու հոն դրաւ իր Հայերէն, Տաճկերէն, Ֆրանսերէն և Անգղերէն քառանէն աւելի ընտիր լրագիրները։

Ուղղը կրնայ երթալ հոն ու 40 վարտ վճարելով աւեն լրագիր կարդալ։

Ըսկէ գատ աս ընկերութիւնը վրան աոած ըլլալով, Մատեոս Աղաւնի, Ալծուի Վասպուրական և Մեղու Հանդէսները գլխաւոր գործակալութիւնը՝ իր ընթերցասրանը կը հրաւիրէ ամեն անոնց բաժնորդ գրվիլ ուզողները։

Սոյնպէս գատ ամեն ուրիշ Հայերէն և հայ գրով Տաճկերէն լրագիրներուս ալ բաժնորդ կրնայ գրել հոն, ինչպէս են Ալըշալըս, Մասիս, Մէհմուասը Ճասլատիս, Մինեասիկ Իրմկյաս, և այլն։

ՕՐԱՑՈՑՑ
1860 ՏԱՐՒՈՑՆ

Խրիմի Թէոդոսիա քաղաքին Պալիպեան տպարանին այս առաջին արդիւնքը, որ թէ ոճին և թէ հետաքրքրութեան արժանի յաւելուածներուն ու տեղեկութիւններուն համար ուսանալու արժանի է, կը ծախվի Մեծ նոր հանը Ընթերցասիրաց Ընկերութեան Ընթերցարանը։

ՍԵՆԴ—ԱՄԱՆՏՑԻ ԼԻՒՍԻԼ
ԿԱՄ
ՍԵՆԵԿԱԼԻ ԱՌԱՆՁՆԱԿԵԱՑԸ

Այս ընտիր և հրահանգիչ պատմութիւնը, որ երևաստարդաց բարոյականի մեծ դասը կրնայ տալ, կը ծախվի նոյն Ընթերցարանը և ամեն Հայ գրասէրներուն քով։

ԽՄԲԱԳԻՐ=ՏՆՕՐԷՆ
Յ. Գ. ՍԱՀԱԿԵԱՆ

Ի ԳԱԼԱԹԱ Կ. ՊՕԼՍՈՑ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ
ՀԱՑՈՑ ԵԿԵՂԵՑՒՈՑ ՓՈՂՈՑ ԹԻՒ 17

Ց. Հեքիաթ Սիրոյ

Ընթրիք մուտք. մեր առաջին հին ծանոթները վերցուցէք առջև մեզի նոր ծանոթներ առաջ։

– Մեռնիմ առաջին մէջ չէ որ մարդիկը ծանոթ կ'լսայինք. վարժուեցուր մէջ ալ առաջ եմ գտա։